

բոլոր սրբավայրերը վերածուեցան մէկ սրբավայրի, որուն մուտքը շինուեցաւ Պատանատեղիին մօտ:

Երուսաղէմացի Յովհաննէս եպօ. աւանդութենէն հետեւեալ կերպով կը պատմէ Յիսուսի մարմնոյն Պատանատեղին բերուելը. « Եւ ըստ վարդապետաց ասի թէ Յովսէփ մատուցեալ իջուցանել զՏէրն ի խաչէն, քակել ոչ կարելով զաստուածամուկս բեւեռոն, զահի հարեալ ի ցոյմանէ հրոյ աստուածութեան, որ ճառագայթեալ ելանէր ընդ տիգամուտ և ընդ բեւեռնափոր տեղիսն, վասն որոյ ի բացեայ կացեալ տարածմամբ ձեռացն ասաց. « Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ »: Երիցս կրկնելով, և խոնարհեցուցանելով զբազուկսն առաջի Յիսուսի յորդ արտասուօք: Որ եւ էջ Տէրն ի բազուկսն Յովսէփայ: Յայնժամ ահիւ և զուղութեամբ ըմբռնեալ զսուրբ մարմինն ի չորից կողմանց, Յովսէփ եւ Նիկողիմոս եւ Սրբուհի Կոյսն եւ Յովհաննէս աշակերտն, և բերեալ եղին ի վերայ Պատանատեղի քարիս այսմիկ: Յայնժամ Կոյսն սուրբ անկեալ համարձակ ի վերայ մարմնոյն, զձեռոն արեամբ ներկեալ ի յինքն ընկալաւ. զկարկառ բերանոյն հանդէպ մերձեցոյց, զառուս արտասուաց ի նոյն կաթեցոյց...» (Հակ. էջ 204-5): Պատանատեղին կ'անուանուի նաև Քար օծման (ակոյ, էջ 206):

Մեր Մաշկեւորցի վարդապետը կը գրէ թէ Յովսէփ գնեց ջանջիլ քթանը՝ որ է կտաւը եւ խունկը որ բերաւ Նիկողիմոս (Քար. էջ 381): Իսկ Յովհաննէս Երզընկացի վարդապետը կ'ըսէ. « Կարի յոյժ մեծարանօք եւ պատուով պատեաց եւ թաղեաց եգիպտացի պաստառակալաւ և խնկօք անուշիւ և զմոսով հանդերձ՝ որպէս օրէն էր Հրէիցն առնել » (Մոր. էջ 606):